Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Չարենցի փողոցի թիվ 76/5 հասցեում գտնվող կաթսայատան վթարային պատի ամրացման և ծխնելույզի ապամոնտաժման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/36» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

06.11.2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գոլգուլյան /գնահատող/, Լ. Գևորգյան /գնահատող/
Ս. Գևորգյան /բացող/, Ե.Մատասյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/36» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Է. Շաքարյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի նոյեմբերի 6-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/36» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ
2	«Սեյսմշին» ՍՊԸ
3	«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ
4	«Հազարաշեն» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Է. Շաքարյան)

3.1 Բաց մրցույթի ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Չարենցի փողոցի թիվ 76/5 հասցեում գտնվող կաթսայատան վթարային պատի ամրացման և ծխնելույզի ապամոնտաժման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր
«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ	550000	270000		270000
«Սեյսմշին» ՍՊԸ		300000		300000
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ		400000		400000
«Հազարաշեն» ՍՊԸ		449000		449000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Է. Շաքարյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ	Բավարար
«Սեյսմշին» ՍՊԸ	Բավարար
«Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ	Բավարար
«Հազարաշեն» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/36» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տող՝ «Սեյսմշին» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Է. Շաքարյան)

6.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ մասնակցի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ 07.11.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Է. Շաքարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության ստացման հաջորդ աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Է. Շաքարյան

Անդամներ՝ ---------- Վ. Գուլգուլյան

---------- Լ. Գևորգյան

---------- Ս. Գևորգյան

---------- Ե.Մատասյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան